

Հայաստանի Հանրապետության Կառավարություն Որոշում

1 հունիսի 2005 թվականի N 946-Ն

Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին

"Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի ահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 15-ի "Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման մի շարք միջոցառումների մասին" N 298 որոշման 4-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության
2005 թվականի հունիսի 1-ի
N 946-Ն որոշման

Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում՝ գործունեության որոշակի ոլորտներում իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներին (այսուհետ՝ ՀԴՄ) ներկայացվող պահանջները:

II. Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները

2. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀԴՄ-ները պետք է բավարարեն սահմանված տեխնիկական պահանջները:

3. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀԴՄ-ների տպագրվող եւ ինդիկատորի վրա արտացոլվող տեղեկատվությունը պետք է լինի հայերեն:

4. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՀԴՄ-ները պետք է բավարարեն հետեւյալ ընդհանուր տեխնիկական պահանջները՝

ա) ՀԴՄ-ն պետք է ունենա՝ ֆիսկալային հիշողություն, ծրագրային նշանաբառ մուտքագրելու հնարավորություն (ոչ պակաս 4 կարգից) կամ թվային բանալիներ (ոչ պակաս 99 տարբերակից)՝ ՀԴՄ-ի հետ մատակարարվող լրակազմի ցուցակում նշած քանակին համապատասխան, հսկիչ հաշվիչների (գործառնական գրանցիչների) առնվազն 4 թվով կարգայնություն՝ հանված ցուցմունքների եւ մարումների համար, ինդիկատոր՝ պատասխանատու անձի համար (պատասխանատու անձ է համարվում այն անձը, ում վրա սահմանված կարգով դրված է ՀԴՄ-ի միջոցով հաշվարկներ իրականացնելու պարտականությունը), ինդիկատոր՝ գնորդի համար (պատասխանատու անձի ինդիկատորը, գնորդի համար տեսանելի լինելու դեպքում, պարտադիր չէ), մակնշվածք, որում պետք է նշված լինեն ՀԴՄ-ի անվանումը, գործարանային համարը, թողարկման թվականը, ՀԴՄ արտադրողի ֆիրմային նշանը: Մակնշվածքի դրոշմման եղանակը պետք է ապահովի դրա պահպանվածությունը ՀԴՄ-ի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

բ) ՀԴՄ-ն պետք է ապահովի՝ ցանցային սնուցման անջատման դեպքում անկախ հիշողության մեջ դրամական եւ գործառնական գրանցիչների տեղեկատվության, ինչպես նաեւ ծառայողական

տեղեկատվության պահպանումը, թվաբանական գործողությունների կատարում՝ ներսարքված հաշվարկիչի կողմից՝ գումարում, հանում, բազմապատկում, աշխատանքի հիմնական ռեժիմների ծրագրավորում, ՅՂՄ-ի ավտոմատ թեստավորում, աշխատունակությունն էլեկտրացանցի (էլեկտրասնուցման) վթարային անջատումներից հետո, ՅՂՄ-ի անխափան աշխատանք՝ միջավայրի ջերմաստիճանի 0-40 օC տիրույթում եւ մթնոլորտի 95 տոկոս (+25 օC պայմաններում) հարաբերական խոնավության դեպքում:

գ) ՅՂՄ-ն պետք է ապահովի աշխատանքի կասեցումը՝ չեկային ժապավենի բացակայության դեպքում, պատասխանատու անձի կողմից սխալ գործողություններ կատարելու դեպքում, ՅՂՄ-ի մեջ այնպիսի վթարային իրավիճակներում, որոնք հանգեցնում են տպվող փաստաթղթի փչացմանը, գերլցման, անսարքության, ֆիսկալային հիշողության անջատման, ինչպես նաեւ աշխատանքի ժամանակ ՅՂՄ-ի ֆիսկալային ռեժիմում ֆիսկալային հիշողության չթուլատրված մուտքի դեպքում:

դ) ՅՂՄ-ի տեխնիկական հնարավորությունները պետք է ապահովեն՝ սպասարկման տեսակների քանակը՝ 30-ից ոչ պակաս, ենթաբաժինների (բաժինների) քանակը՝ 8-ից ոչ պակաս, պատասխանատու անձանց (օպերատորների) թվաքանակը՝ 2-ից ոչ պակաս, մուտքագրվող եւ ինդիկացվող գումարների կարգայնությունը՝ 7-ից ոչ պակաս, դրամական հաշվարկիչների կարգայնությունը՝ 8-ից ոչ պակաս, ընդհանուր հանրագումարի հաշվարկիչների կարգայնությունը՝ 9-ից ոչ պակաս:

5. ՅՂՄ-ները պետք է բավարարեն ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները:

6. ՅՂՄ-ն պետք է ունենա պատյան, որը չի կարող հանվել առանց արտադրող կազմակերպության կամ ՅՂՄ-ի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության եւ հարկային տեսչության կողմից դրված կապարակնիքները վնասելու (պոկելու):

7. ՅՂՄ-ի միջոցով տպագրվող չեկը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունը՝ չեկի հերթական համարը, կազմակերպության անվանումը, հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, ՅՂՄ-ի գրանցման համարը, գնման (սպասարկման) թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), գնման (սպասարկման) ժամը, գնման (սպասարկման) գումարը, ավելացված արժեքի հարկի գումարը, գնորդի (սպառողի) (այսուհետ՝ գնորդ) մուծած գումարը, մանրադրամի գումարը, ՅՂՄ-ի գործարանային համարը, սպասարկման տիպի, ստորաբաժանման (բար, բուֆետ, ռեստորան, հյուրանոց), հիշվող նիշերի քանակը, ոչ պակաս 11 նիշ, ապրանքի (ծառայության) անվանումը եւ կոդը, պատասխանատու անձի ծածկագիրը:

8. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ՅՂՄ-ների միջոցով իրականացվող դրամարկղային գործառնությունների կազմը ներառում է՝ դրամական գումարների հաշվառումը, մասնավոր հանրագումարների հաշվառումը, մանրադրամի գումարի հաշվումը, ընդհանուր հանրագումարների հաշվումը, դրամական գրանցիչների մարումը՝ ավտոմատ ելքագրմամբ տպագրելու համար, գործառնական գրանցիչների մարումը՝ ավտոմատ ելքագրմամբ տպագրելու համար, վաճառքը (հաշվարկը)՝ կանխիկ դրամով, վերադարձումը, տարայի եւ փաթեթավորման գնի հաշվառումը, չեղյալ համարումը, գնման (սպասարկման) կրկնումը, տոկոսային հավելվածարի հաշվարկը, պատասխանատու անձի (օպերատորի) սխալի ուղղումը մինչեւ տեղեկատվության ելքագրումը տպագրման, տեխնիկական կրիչին, ապրանքի մուտքի հաշվառումը, ավելացված արժեքի հարկի առանձնացումը:

9. ՅՂՄ-ները պետք է ապահովեն հետեւյալ հաշվետվական փաստաթղթերի կազմումը՝ հաշվետվական փաստաթղթերի ձեւավորումը (տարբեր տիպի հաշվետվությունները կարող են համատեղվել մեկ տեղեկագրում՝ բացառությամբ ֆիսկալային հաշվետվության), ֆիսկալային հաշվետվություն՝ ըստ պատասխանատու անձանց (օպերատորների), ըստ ենթաբաժինների (սպասարկումների), ըստ ապրանքատեսակների, ժամային հաշվետվություն:

III. Հսկիչ-դրամարկղային մեքենաների ֆիսկալային հիշողությունը

10. ՅՂՄ-ներին ներկայացվող՝ սույն պահանջներում կիրառվող հասկացությունները նշանակում են՝ ՅՂՄ-ի ֆիսկալային հիշողություն՝ երկարատեւ հիշող սարք, որը հանդիսանում է ՅՂՄ-ի բաղկացուցիչ մասը եւ նախատեսված է օրական կամ հերթափոխային (այսուհետ՝ հերթափոխային) հաշվետու հանրագումարային տեղեկատվության գրանցման համար եւ բացառում է այդ տեղեկատվության

փոփոխությունը: Յերթափոխային գրանցում նշանակում է բնակչության հետ դրամական հաշվարկների մասին հանրագումարային տեղեկատվության գրառում ֆիսկալային հիշողության մեջ՝ հերթափոխի վերջին գործառնությունը (գնումը) կատարելու հետո: Յերթափոխի տեղողությունը չպետք է գերազանցի 24 ժամը, ֆիսկալային հիշողության կուտակիչ՝ մեկ կամ մի քանի հատուկ առանձնացված հիշողության միկրոսխեմաներ՝ ֆիսկալային տվյալների պահպանման համար, ֆիսկալային տվյալներ՝ տեղեկատվություն, որը ենթակա է գրանցման ֆիսկալային հիշողության մեջ, ֆիսկալավորում՝ ՅՂԱ-ի ֆիսկալային ռեժիմի միացում, հանրագումար՝ գումար, որը ենթակա է գրանցման՝ փաստաթղթի ձեւակերպումն ավարտելիս: Յանրագումարի մեծությունը չի կարող լինել բացասական, մասնավոր հանրագումար՝ գումար, որը ձեւավորում է ՅՂԱ-ն փաստաթղթի ձեւակերպման գործընթացում: Մասնավոր հանրագումարի մեծությունը չի կարող լինել բացասական: Մասնավոր հանրագումարի ձեւավորման գործընթացում "ստոռնոի" կիրառման, ճշտման, գեղչի գործառնությունները նվազեցնում են մասնավոր հանրագումարը համապատասխան մեծությամբ, հերթափոխային վաճառքների հանրագումար՝ հերթափոխի ընթացքում վաճառքների (սպասարկումների մատուցման) գրանցման ժամանակ ՅՂԱ-ով ձեւակերպված փաստաթղթերի հանրագումարների գումար, հերթափոխային դրամական գրանցիչներ՝ ՅՂԱ-ի օպերատիվ հիշողության տիրույթ, որում հերթափոխի ընթացքում ՅՂԱ-ի միջոցով գրանցվում են մուտքագրվող գումարները, ընդհանուր դրամական գրանցիչներ՝ ՅՂԱ-ի օպերատիվ հիշողության տիրույթ, որում աշխատանքային ամբողջ ժամկետի ընթացքում կամ էլ վերջին ընդհանուր մարման պահից ՅՂԱ-ի միջոցով գրանցվում են մուտքագրվող գումարները, գործառնական գրանցիչներ՝ ՅՂԱ-ի օպերատիվ հիշողության տիրույթ, որում գրանցվում է կատարված գործառնությունների քանակը, հերթափոխի փակում՝ գնումների հերթափոխային հաշվետվության մարում, ընդհանուր մարում՝ ընդհանուր դրամական եւ գործառնական գրանցիչների (բացի մարումների քանակի գրանցիչից) գրոյացում: Եթե ՅՂԱ-ում նախատեսված է աշխատանքի ռեժիմի ծրագրավորում՝ հանրագումարների կուտակմամբ առանց ընդհանուր մարման, ապա ծրագրավորման միացումը կատարվում է ՅՂԱ-ի տեղակայման ժամանակ՝ շահագործման փաստաթղթերի համաձայն: Յայաստանի Յանրապետությունում կիրառվող ՅՂԱ-ների շահագործման փաստաթղթերը պետք է լինեն հայերեն կամ առկա լինի դրանց հայերեն թարգմանությունը:

11. Ֆիսկալային հիշողության մեջ գրանցվում է հետեւյալ տեղեկատվությունը (ֆիսկալային տվյալներ)՝

Գրառման տեսակը	Ռեկվիզիտները	Ռեկվիզիտի կարգայնությունը (տասնորդական կարգերի)	Գրառումների քանակը
Յամար	ՅՂԱ-ի գործարանային համարը		1
ՅՂԱ-ի ֆիսկալավորում	ՅՂԱ-ի գրանցման համարը	Նվազագույնը՝ 8	1
	կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը	Նվազագույնը՝ 12	
	ֆիսկալավորման թվականը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	
	վերագրանցում անցկացնելու եւ ֆիսկալային հաշվետվություն ստանալու նշանաբառը	Նվազագույնը՝ 5	
ՅՂԱ-ի վերագրանցում	ՅՂԱ-ի գրանցման համարը	Նվազագույնը՝ 8	4
	կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը	Նվազագույնը՝ 12	
	վերագրանցման թվականը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	
	հերթափոխի վերջին փակման համարը	4	
	վերագրանցում անցկացնելու եւ ֆիսկալային հաշվետվություն ստանալու նշանաբառը	Նվազագույնը՝ 5	

Յերթափոխի փակում	հաշվետվության թվականը (օրը, ամիսը, տարեթիվը)	6	Նվազագույնը՝ 2000
	հերթափոխի փակման համարը	4	
	հերթափոխի վաճառքների հանրագումարը	Նվազագույնը՝ 9	
Ծառայողական տեղեկատվություն (պարտադիր է)	գրառումների հսկիչ գումարները	որոշվում է արտադրողի կողմից	
	ստորակետի դիրքը ֆիսկալային հաշվետվության մեջ գրանցվող հանրագումարների արժեքներում		
	ծառայողական դասիչները, հատկանիշները (որոշմները)		

IV. Աշխատանքային ռեժիմները եւ ֆիսկալային հիշողությունը լրացնելու կարգը

12. ՅԴԱ-ն պետք է ապահովի աշխատանքը ոչ ֆիսկալային եւ ֆիսկալային ռեժիմներում:
13. Ոչ ֆիսկալային ռեժիմ՝ ՅԴԱ-ի գործելու ռեժիմը մինչեւ ֆիսկալավորման անցկացումը: Ոչ ֆիսկալային ռեժիմում չօգտագործված եւ մնում ֆիսկալային հիշողության մեջ հերթափոխային հաշվետվությունների գրանցման եւ ֆիսկալային հաշվետվության ստացման գործառնությունները: Ոչ ֆիսկալային ռեժիմում հնարավոր է իրականացնել ՅԴԱ-ի մնացած բոլոր գործառնությունները, այդ թվում՝ նաեւ վաճառքների վերաբերյալ տվյալների կուտակումը եւ փաստաթղթերի ձեւավորումը՝ ՅԴԱ-ի մոդելի շահագործման փաստաթղթերին համապատասխան: Բնակչության հետ հաշվարկներ կատարելիս՝ չի թույլատրվում ոչ ֆիսկալային ռեժիմում ՅԴԱ-ի օգտագործումը:
14. Ֆիսկալային ռեժիմ՝ ՅԴԱ-ի գործողության ռեժիմն է, որն ապահովում է ֆիսկալային հաշվետվության մեջ ֆիսկալային տվյալների գրանցումը: Ֆիսկալային ռեժիմը պետք է ապահովի ՅԴԱ-ի աշխատանքը՝ շահագործման փաստաթղթերին համապատասխան: ՅԴԱ-ի ֆիսկալային ռեժիմում ձեւակերպվող բոլոր փաստաթղթերը (ներառյալ կտրոնները) պետք է ունենան տարբերիչ հատկանիշ, որը նշված է ՅԴԱ-ի կոնկրետ մոդելի շահագործման փաստաթղթերում եւ տպագրվում է միայն ֆիսկալային ռեժիմի միացումից հետո:
15. Ֆիսկալային ռեժիմի միացումը պետք է կատարվի ՅԴԱ-ի ֆիսկալավորումն ավարտելիս: ՅԴԱ-ի ֆիսկալավորումն անց է կացվում միայն հարկային տեսուչին մատչելի հատուկ առանձնացված ռեժիմում: Մուտքը ռեժիմ թույլատրվում է ֆիսկալային հիշողության մուտքի նշանաբանի մուտքագրումից հետո: Ֆիսկալային հիշողության մուտքի նախնական նշանաբանը եւ ֆիսկալավորման ու վերագրանցման կարգը պետք է նշվեն ՅԴԱ-ի կոնկրետ մոդելի շահագործման փաստաթղթերում: Ֆիսկալավորման անցկացումից հետո ֆիսկալային ռեժիմն անջատվել չի կարող:
16. Ֆիսկալավորման ընթացքում հարկային տեսուչը մուտքագրում է հետեւյալ ռեկվիզիտները՝ ՅԴԱ-ի գործարանային համարը, ՅԴԱ-ի գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՅՎՅՅ), ֆիսկալավորման անցկացման կարգը, դեպի ֆիսկալային հաշվետվություն մուտքի նշանաբանը: Եթե ՅԴԱ-ի գործարանային համարը մոցվում է ֆիսկալային հաշվետվության մեջ արտադրող կազմակերպությունում, ապա ֆիսկալավորման ժամանակ այն չի մուտքագրվում:
17. Հարկային տեսուչը վերագրանցման գործընթացում մուտքագրում է հետեւյալ ռեկվիզիտները՝ դեպի ֆիսկալային հիշողության մուտքի նշանաբանը, ՅԴԱ-ի գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՅՎՅՅ), վերագրանցման անցկացման թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), դեպի ֆիսկալային հաշվետվություն մուտքի նոր նշանաբանը:
18. Ֆիսկալավորման կամ վերագրանցման դեպքում հարկային տեսուչի մուտքագրած բոլոր ռեկվիզիտները (բացի դեպի ֆիսկալային հիշողություն մուտքի նոր նշանաբանից) պետք է տպվեն չեկում կամ գրանցվեն ներդիր փաստաթղթում:
19. Յերթափոխային հաշվետվության տվյալները պետք է գրանցվեն ֆիսկալային հիշողության մեջ հերթափոխի ավարտման գործառնության կատարման ժամանակ (ՅԴԱ-ի կողմից մարմամբ հերթափոխային հաշվետվության ձեւավորման դեպքում): Ընդ որում, դրամական հերթափոխային գրանցիչների մարումը պետք է տեղի ունենան միայն հերթափոխային հաշվետվությունը տպելուց եւ տվյալները ֆիսկալային հիշողության մեջ գրանցելուց հետո: ՅԴԱ-ի վրա ընդհանուր մարման,

վերագրանցման, ֆիսկալային հաշվետվության հանման եւ թվականն ուղղելու գործառնությունները կարող են իրականացվել միայն հերթափոխն ավարտելու գործողությունը կատարելուց հետո: Մինչ այդ պահը նշված գործառնությունների իրականացումը պետք է կասեցվի:

20. ՀՀ-ն պետք է վերահսկի հերթափոխի տեւողությունը, որը պետք է սահմանափակվի օրացուցային օրով կամ կազմի 24 ժամից ոչ ավելի: Հերթափոխի տեւողության սկիզբ է համարվում հերթափոխի ընթացքում առաջին վճարային փաստաթղթի ձեւակերպման ավարտը: Հերթափոխի՝ նշված տեւողության գերազանցման դեպքում ՀՀ-ն պետք է կասեցնի վճարային փաստաթղթի ձեւակերպման հնարավորությունը՝ մինչեւ մարմամբ հերթափոխային հաշվետվության անցկացումը:

21. Ընթացիկ թվականի ուղղման դեպքում ՀՀ-ն պետք է վերահսկի մուտքագրվող թվականի ճշտությունը, որը չի կարող լինել ավելի վաղ, քան ֆիսկալային հիշողության մեջ վերջին գրառման թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), ներառյալ նաեւ ֆիսկալավորման կամ վերագրանցման գործողությունների անցկացման թվականը: Հետին թվականի մուտքագրմամբ փորձի դեպքում ՀՀ-ն պետք է կասեցնի բոլոր գործառնությունների անցկացումը՝ մինչեւ ճիշտ թվականի մուտքագրումը: Մեկ օրվանից ավելի տարբերությամբ հետագա ամսաթվի գրանցման դեպքում ՀՀ-ն պետք է կատարի գործողություններ գրանցման պատահական սխալի կանխման նպատակով, օրինակ՝ թվականի կրկնակի հարցում եւ դրա տեղադրումը միայն կրկնակի համընկնումից հետո:

V. Դեպի ֆիսկալային տվյալներ մուտքի կարգը

22. Ֆիսկալային հաշվետվության ստացումը եւ վերագրանցման անցկացումը հնարավոր են բացառապես դեպի ֆիսկալային հիշողության մուտքի նշանաբառով:

23. Ֆիսկալային տվյալներին դիմելու դեպքում հարկային տեսուչը համապատասխան ռեժիմ պետք է մտնի բանալու եւ (կամ) դեպի ռեժիմ մուտքի նշանաբառի օգնությամբ: Այդ ռեժիմում հարկային տեսուչի հետագա գործողությունները պետք է շարադրված լինեն ՀՀ-ի կոնկրետ մոդելի շահագործման փաստաթղթերում:

VI. Ֆիսկալային հիրողությամբ հսկիչ-դրամարկային մեքենաների աշխատանքի կասեցման պայմանները

24. ՀՀ-ն պետք է կասեցնի գործողությունների կատարումը հետեւյալ դեպքերում՝ դեպի ֆիսկալային հիշողություն մուտքի ոչ ճիշտ նշանաբառի մուտքագրման փորձի դեպքում, ընդ որում, կասեցվում է բոլոր գործառնությունների կատարումը եւ նշանաբառի մուտքագրման ռեժիմից ելքը: Կասեցումը պետք է գործի մինչեւ ճիշտ նշանաբառի մուտքագրման պահը, ընդհանուր մարման վերագրանցման, ֆիսկալային հաշվետվության հանման եւ թվականի ուղղման գործառնությունների անցկացման փորձի ժամանակ սույն պահանջների 19-րդ կետում նշված դեպքում: ՀՀ-ի այդ գործառնությունների կատարման կասեցումը պետք է հանվի ավարտման գործառնության կատարումից հետո, առանց ՀՀ-ի ընդհանուր մարման գործառնության անցկացման՝ տասնորդական կետի դիրքի փոփոխման փորձի դեպքում ՀՀ-ի այդ գործողության կասեցումը պետք է հանվի ՀՀ-ի ընդհանուր մարման գործառնության անցկացումից հետո, հերթափոխն ավարտելու գործողությունը չանցկացնելու դեպքում (սույն պահանջների 20-րդ կետում նշված դեպքում): ՀՀ-ի գրանցող գործողությունների կասեցումը պետք է հանվի հերթափոխն ավարտելու գործողությունը կատարելուց հետո, թվականն ուղղելու ժամանակ՝ սույն պահանջների 21-րդ կետում նշված դեպքում: ՀՀ-ի գրանցող գործողությունների կասեցումը պետք է հանվի ճիշտ թվականի մուտքագրումից հետո, ֆիսկալային հիշողության գերլցում, անսարքություն կամ անջատում հայտնաբերելու դեպքում: ՀՀ-ի գրանցող գործողությունների կասեցումը պետք է հանվի կասեցում առաջացնող պատճառները վերացնելուց հետո: Ընդ որում, կարող է թույլատրվել հերթափոխային կամ կուտակային հաշվետվությունների ստացումը՝ առանց մարման, իսկ ֆիսկալային հիշողության գերլցման դեպքում՝ նաեւ ֆիսկալային հաշվետվության ստացումը:

25. ՀՀ-ն պետք է ապահովի ֆիսկալային հիշողության մեջ ազատ դաշտերի քանակի մասին հաղորդագրության ստացումը՝ հերթափոխային հաշվետվությունների գրառման համար: Ազատ դաշտերի 30-ից պակաս քանակի դեպքում հաղորդագրության ելքագրումը պարտադիր է եւ պետք է

իրականացվի ավտոմատ կերպով՝ հերթափոխն ավարտելու կամ հերթափոխն սկսելու գործողությունների ժամանակ՝ ՅՊՄ-ի ձեռակերպած փաստաթղթի վրա:

VII. Ֆիսկալային հաշվետվության ստացումը

26. Ֆիսկալային հաշվետվության նշումը եւ նրա ստացման համար գործողությունների հաջորդականությունը պետք է շարադրված լինեն ՅՊՄ-ի կոնկրետ մոդելի շահագործման փաստաթղթերում:

27. Ֆիսկալային հաշվետվություն ստանալու համար հարկային տեսուչը պարտավոր է՝ գործողության մեջ դնել դեպի ֆիսկալային հաշվետվություն մուտքի նշանաբառը, գործողության մեջ դնել այն ժամանակամիջոցի սկզբնական թվականը (կամ հերթափոխն ավարտելու սկզբնական համարը), որի համար ստացվում է ֆիսկալային հաշվետվությունը, գործողության մեջ դնել ֆիսկալային հաշվետվության տեսակների հատկանիշը (լրիվ կամ կրճատ): Ընդհանուր դեպքում կարող է տրվել ակնհայտորեն ավելի մեծ ժամանակամիջոց, քան ֆիսկալային հաշվետվության մեջ փաստորեն գրանցվածը:

28. Ֆիսկալային հաշվետվությունը պետք է պարունակի հետեւյալ ռեկվիզիտները՝ կազմակերպության անվանումը, ֆիսկալային հաշվետվության հատկանիշը, փաստաթղթի համընդգրկող կարգային համարը, հաշվետվության ստացման թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), հաշվետվության ստացման ժամանակը ՅՊՄ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան, ժամանակամիջոցը, որի համար ձեռավորվում է հաշվետվությունը, ՅՊՄ-ի գործարանային համարը, ՅՊՄ-ի անցկացրած բոլոր վերագրանցումների ռեկվիզիտները (բացի նշանաբառից), տվյալ ժամանակամիջոցում հերթափոխային վաճառքների բոլոր հանրագումարները՝ կոնկրետ հանրագումարի գրանցման թվականի եւ հերթափոխի ավարտման համարի նշմամբ: Այս տեղեկությունները դուրս են բերվում միայն լրիվ ֆիսկալային հաշվետվություն ստանալու դեպքում, տվյալ ժամանակամիջոցում հերթափոխային գումարների բոլոր հանրագումարները՝ կոնկրետ հանրագումարի գրանցման թվականի եւ հերթափոխի ավարտման համարի նշմամբ: Այս տեղեկությունները դուրս են բերվում միայն լրիվ ֆիսկալային հաշվետվություն ստանալու դեպքում. տվյալ ժամանակամիջոցում վաճառքների գումարային հանրագումարը: Եթե տվյալ ժամանակամիջոցում, որի համար հանվում է ֆիսկալային հաշվետվությունը, փոխվել է տասնորդական կետի տեղադիրքը, ապա ռեկվիզիտները պետք է վերահաշվվեն եւ տպվեն ՅՊՄ-ում սահմանված ֆորմատով, որը պարունակում է նշանների առավելագույն քանակը տասնորդական կետից հետո, տվյալ ժամանակամիջոցում գումարների գումարային հանրագումարը: Եթե տվյալ ժամանակամիջոցում, որի համար հանվում է ֆիսկալային հաշվետվությունը, փոխվել է տասնորդական կետի տեղադիրքը, ապա ռեկվիզիտները պետք է վերահաշվվեն եւ տպվեն ՅՊՄ-ում սահմանված ֆորմատով, որը պարունակում է նշանների առավելագույն քանակը տասնորդական կետից հետո:

VIII. Ֆիսկալային հիշողության կառուցվածքը

29. Ֆիսկալային հիշողությունը պետք է տեղակայված լինի ՅՊՄ-ի ընդհանուր կապարակնքված պատյանի տակ, իսկ ՅՊՄ-ի հանգուցային կառուցվածքի դեպքում՝ կապարակնքված պատյանի տակ, որը ծածկում է Էներգաանկախ օպերատիվ հիշող սարքը (որում ձեռավորվում են ֆիսկալային տվյալները) եւ ֆիսկալային հիշողության ու վճարային փաստաթղթերի տպող սարքի կառավարման պրոցեսորը:

30. Ֆիսկալային հիշողությունը կամ առնվազն ֆիսկալային հիշողության կուտակիչը պետք է ունենա առանձին մոդուլի տեսք: Այդ մոդուլի կառուցվածքը պետք է ապահովի ֆիսկալային հիշողության մեջ տեղեկատվության փոփոխման եւ ֆիսկալային հիշողության կուտակիչի փոխարինման անհնարինությունը:

31. Ֆիսկալային հիշողության (ֆիսկալային հիշողության կուտակիչի) կառուցվածքը պետք է նախատեսի պաշտպանվածություն մեխանիկական, էլեկտրամագնիսական եւ այլ տեսակի ներգործություններից՝ ինչպես ՅՊՄ-ի աշխատանքի, այնպես էլ տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ընթացքում:

32. Ֆիսկալային հիշողության կուտակիչում գրանցված տեղեկատվությունը պետք է պահպանվի ոչ պակաս 6 տարվա ընթացքում՝ ՅՂՄ-ն ֆիսկալային ռեժիմի փոխադրելու պահից:

IX. Լրացուցիչ պահանջներ

33. ՅՂՄ-ում պետք է նախատեսվի ֆիսկալային տվյալների պահպանվածությունն ստուգելու ռեժիմ: Ռեժիմի անցկացման կարգը պետք է շարադրված լինի ՅՂՄ-ի կոնկրետ մոդելի շահագործման փաստաթղթերում:

34. ՅՂՄ-ում պետք է նախատեսված լինի վերանորոգող կազմակերպության պայմաններում, տեխնիկական այլ միջոցներով, հարկային տեսուչի կողմից ֆիսկալային հիշողության պարունակության ընթերցման հնարավորություն՝ ՅՂՄ-ի վթարի դեպքում: Այդ դեպքի համար ֆիսկալային հիշողության պարունակության ընթերցման կարգը պետք է նշված լինի ՅՂՄ-ի կոնկրետ մոդելի վերանորոգման փաստաթղթերում:

35. ՅՂՄ-ի ծրագրային ապահովումը, ՅՂՄ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան, գործողությունների լրիվ իրականացման հետ մեկտեղ, պետք է բացառի օգտագործողի կողմից առանց ՅՂՄ-ի կապարակնքման խախտման իր այն մասի փոփոխման հնարավորությունը, որը ղեկավարում է տեղեկատվության ընթերցումը եւ գրանցումը ֆիսկալային հիշողության մեջ, ֆիսկալային տվյալների ձեւավորումն էներգաանկախ հիշող սարքում եւ ֆիսկալային ռեժիմի տարբերիչ հատկանիշի տպագրումը փաստաթղթերի վրա: ՅՂՄ-ի բազմապրոցեսորային կառուցվածքի դեպքում նշված պահանջը վերաբերում է միայն մեկ՝ ֆիսկալային հիշողության ղեկավարման համար առանձնացված պրոցեսորի ծրագրային ապահովմանը, բացառապես, որի միջոցով եւ պետք է իրականացվի մյուս պրոցեսորների ծրագրային եւ ֆիզիկական մուտքը դեպի ֆիսկալային գործողություններ: